# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## N ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/12 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ջրվեժ «17» փետրվարի 2022թ.
ժամը 11:00

Մասնակցումէին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Սանթրոսյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Թադևոսյան, Հ.Գրիգորյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ.Իսոյան

Պատվիրատուն՝ Ջրվեժի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ Մելքոնյան 76 հասցեում, ստորև ներկայացնում է «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/12» ծածկագրով Ջրվեժ համայնքի կարիքների համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման մասին համառոտ տեղեկատվություն:

N ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/12 ծածկագրով գնանշման հարցման հայտերի բացման և գնահատման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ գնանշման հարցման հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցներիանվանումը | Գտնվելուվայրը,հեռախոսահամարը, էլ.փոստ |
|---|---|---|
| 1 | «ԷԴԱՐ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ | Արարատ, Նորաշեն, Ն.Ստեփանյան 67<br>055 44 83 38 edarprojekt@mail.ru |
| 2 | «ՍՄ Ստուդիո» ՍՊԸ | Կոտայք, ք.Աբովյան, Ռոսիայի փող., 4շ.74բն.<br>093 70 08 80 zangvac-ltd@mail.ru |
| 3 | «Թերմոշինթել» ՍՊԸ | Կոտայքի մարզ, ք.Հրազդան, Վանատուր-327<br>094 00 10 44 termoshintel@gmail.ru |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Ծրարների կազմման և ներկայացման համապատասխանությունը.

Համապատասխանում են՝ «ԷԴԱՐ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի, «ՍՄ Ստուդիո» ՍՊԸ-ի և «Թերմոշինթել» ՍՊԸ–ի կողմից ներկայացված ծրարները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Բացված ծրարներում հրավերով նախատեսված փաստաթղթերի առկայությունը, դրանց կազմման համապատասխանությունը գնանշման հարցման հրավերով սահմանված վավերապայմաններին. Համապատասխանում են՝ «ԷԴԱՐ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ի, «ՍՄ Ստուդիո» ՍՊԸ-ի և «Թերմոշինթել» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4.Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են .

Չափաբաժին 1: Ջրվեժ համայնքի կարիքների համար ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում

| Հ/Հ | Մասնակցիանվանումը | Առաջարկված գինը (ՀՀ դրամով) | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | «Թերմոշինթել» ՍՊԸ | 1 200 000 | - | 1 200 000 |
| 2 | «ՍՄ Ստուդիո» ՍՊԸ | 1 630 000 | - | 1 630 000 |

Չափաբաժին 2: Ջրվեժ համայնքի կարիքների համար ներհամայնքային ճանապարհների ասֆալտբետոնե ծածկի ընթացիկ նորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում

| Հ/Հ | Մասնակցիանվանումը | Առաջարկված գինը (ՀՀ դրամով) | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | «Թերմոշինթել» ՍՊԸ | 350 000 | - | 350 000 |
| 2 | «ՍՄ Ստուդիո» ՍՊԸ | 350 000 | - | 350 000 |

Չափաբաժին 3: Ձորաղբյուրի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում

| Հ/Հ | Մասնակցիանվանումը | Առաջարկվածգինը (ՀՀ դրամով) | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | «ՍՄ Ստուդիո» ՍՊԸ | 360 000 | - | 360 000 |
| 2 | «Թերմոշինթել» ՍՊԸ | 950 000 | - | 950 000 |
| 3 | «ԷԴԱՐ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ | 2 800 000 | - | 2 800 000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով, որ գնման 3-րդ չափաբաժինն իրականացվում է «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությանը համապատասխան ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու համար առաջարկվեց գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարել միաժամանակյա բանակցություններ, քանի որ նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Բանակցությունների արդյունքում.

«Թերմոշինթել» ՍՊԸ-ն և «ԷԴԱՐ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ն հրաժարվեցին 3-րդ չափաբաժնի մասով հրաժարվեց նվազեցնել առաջարկված գները և նրանց ներկայացրած գնային առաջարկները մնացին անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6. Բավարար գնահատված, առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարվեցին համապատասխանաբար՝

Չափաբաժին 1: Ջրվեժ համայնքի կարիքների համար ճանապարհների ասֆալտապատման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Առաջարկված գինը (ՀՀդրամով) | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | «Թերմոշինթել» ՍՊԸ | 1 200 000 | - | 1 200 000 |
| 2 | «ՍՄ Ստուդիո» ՍՊԸ | 1 630 000 | - | 1 630 000 |

Չափաբաժին 3: Ձորաղբյուրի վարչական շենքի վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Առաջարկված գինը (ՀՀդրամով) | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | «ՍՄ Ստուդիո» ՍՊԸ | 360 000 | - | 360 000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | «Թերմոշինթել» ՍՊԸ | 950 000 | - | 950 000 |
| 3 | «ԷԴԱՐ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ | 2 800 000 | - | 2 800 000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

7. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով, որ գնման 2-րդ չափաբաժնի մասով մասնակիցները առաջարկած նվազագույն գնային առաջարկները հավասար են, ուստի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

8.«Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն գնման ընթացակարգը 4-րդ չափաբաժնի մասով չկայացած է հայտարարվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

9.Հանձնաժողովը որոշեց.

ա) Ընտրված մասնակից ճանաչել՝ 1-ին չափաբաժնի մասով՝ «Թերմոշինթել» ՍՊԸ-ին և 3-րդ չափաբաժնի մասով՝ «ՍՄ Ստուդիո» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված, նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

բ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունն ուղղարկել հրապարակման:

գ) Ընտրված մասնակիցների հետ պայմանագիր կնքել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

10. ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/12 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքների արդյունքների ամփոփման նիստ հրավիրել գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 10:30-ին, հասցեն՝ Ջրվեժի համայնքապետարան՝ Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք, գ. Ջրվեժ, Մելքոնյան 76:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Սանթրոսյան

Անդամներ՝ Ս.Թադևոսյան

Հ.Գրիգորյան

Քարտուղար՝ Տ.Իսոյան